ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1311-Լ

«29» դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ համայնքի ավագանու կին անդամներին ծաղիկներ նվիրելու նպատակով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 54000 /հիսունչորս հազար/ դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՊԱՐԱՏԱ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МЭРИЯ ВАГАРШАПАТСКОГО МУНИЦИПАЛИТЕТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGHARSHAPAT
04440307

Ստորագրված է
«29»դեկտեմբերի 2025 թվականին
ք. Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1312-Լ

«29» դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի և 39-րդ հոդվածի պահանջներով, Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ 44-օրյա պատերազմում զոհվածների կանանց և մայրերին ծաղիկներ նվիրելու նպատակով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 108000 /մեկ հարյուր ութ հազար/ դրամ փոխանցել ԱՁ Մանուկ Անդրեասյանին՝ նրա հետ կնքած պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
«29» դեկտեմբերի 2025 թվականին
ք. Էջմիածին

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13134**

«29» դեկտեմբեր 2025թ. ք. Էջմիածին

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲԻ»-ԻՆ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲԻ» հայտը (մուտք՝ 2025 թվականի դեկտեմբերի 29-ի N 8947).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Անհատ ձեռնարկատեր «ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՐՈԲԻ»-ին տալ 2025 թվականի դեկտեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ. Մաշտոցի փողոց 14/94 հասցեում բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն (Թույլտվություն N 339 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԼՔԱԿՅԱՆ**

Ստորագրված է
29 դեկտեմբերի 2025 թվականին
ք. Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ 1314Ա

**«30» դեկտեմբեր 2025թ.** **ք. ԷՋՄԻԱԾԻՆ**

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 9 «ԱԻԴԱ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Ադիդա» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետ՝ ՀՈԱԿ/ առկա է տնօրենի թափուր պաշտոն, իսկ դրա համալրումը անհրաժեշտ է ՀՈԱԿ-ի լիարժեք աշխատանքնային գործունեության համար

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2026 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 11:00-ին, Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 9 «Ադիդա» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ:

2. Ապահովել անցկացվող մրցույթի հայտարարության հրապարակումը http:/www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

3. Տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացման անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
30 դեկտեմբերի 2025 թվականին
Ք. Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ 1315 Ա

«30» դեկտեմբեր 2025թ. ք. ԷՋՄԻԱԾԻՆ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 3 «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թ. մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում /այսուհետ՝ ՀՈԱԿ/ առկա է տնօրենի թափուր պաշտոն, իսկ դրա համալրումը անհրաժեշտ է ՀՈԱԿ-ի լիարժեք աշխատանքնային գործունեության համար

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2026 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 15:00-ին, Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ:

2. Ապահովել անցկացվող մրցույթի հայտարարության հրապարակումը http:/www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև Վաղարշապատի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

3. Տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքների իրականացման անմիջական պատասխանատու նշանակել աշխատակազմի քարտուղարին:

4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմերին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 դեկտեմբերի 2025 թվականին
Ք. Էջմիածին

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13/64

30 դեկտեմբեր 2025թ. ք.Էջմիածին

## ԹԻՎ 103/25 ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 103/25 վարչական գործը՝ հարկային պարտավորությունների ժամանակին չվճարված գումարները գանձելու մասին, պարզեց որ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը /հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Տերյան փող., թիվ 74 տուն, պետ.ռեգիստրի գրանցման համար 222.160.699243/ 2012-09-07, ՀՎՀՀ 01507028/ հանդիսանալով անշարժ գույքի հարկ վճարող սուբյեկտ, ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից /VXSOFT ծրագիր/ ստացված տեղեկանքների և Վաղարշապատի համայնքապետարանի 04.09.2025 թվականի թիվ 3603 գրության հիման վրա, 2025 թվականի սեպտեմբերի 4-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը պատշաճ ծանուցվել է /հիմք 04.09.2025թ. թիվ 3603/ վարչական վարույթի հարուցման մասին: Վերջիններիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը ծանուցումը և իրազեկումը ստանալուց հետո /հիմք՝ փոստային առաքանի թիվ AL0129395068AM/, Վաղարշապատի համայնքապետարանում 15.09.2025 թվականին ստացվել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի ներկայացուցչի գրությունը, որով վերջինս խնդրել է կարճել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի դեմ հարուցված վարչական վարույթը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնադրամը ամբողջովին ազատված է հարկերից, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքում «Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2010 թվականի մայիսի 18-ի թիվ ՀՕ-51-Ն օրենքի 1-ին հոդվածը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ներկայացված դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի պարշտոնակատարի 16.09.2025 թվականի թիվ 3772 գրությամբ ներկայացվել է պատասխան, որով հայտնվել է, որ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը ազատված չէ տեղական հարկերը վճարելու պարտականությունից, սակայն ՀՀ կառավարության 20 հուլիսի 2017 թվականի N 872-Ն որոշմամբ սահմանված ցանկի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի ուսումնափորձարարական տնտեսությունը («Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ) ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կազմակերպությունների ցանկում և կարող է ազատվել Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի հարկից 50 տոկոսի չափով:

Հիմք ընդունելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել պարզելու 04.09.2025 թվականին հարուցված թիվ 103/25 վարչական վարույթում ներառված հողամասերը արդյո՞ք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով օգտագործվող հողեր, որոշվել է հարցմամբ դիմել համապատասխան կառույցներին:

Վերոգրյալի հիման վրա Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից 03.10.2025թ. կայացվել է «Հարուցված վարչական վարույթի երկարաձգելու մասին» թիվ 1036 Ա որոշումը, որի համաձայն 04.09.2025 թվականին հարուցված թիվ 103/25 վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օր ժամկետով:

Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 03.10.2025 թվականի թիվ 4156 և 4157 գրություններով հարցումներ է ուղարկվել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեին, պարզելու, արդյո՞ք թիվ 103/25 վարչական վարույթում ներառված հողամասերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով օգտագործվող հողեր:

31.10.2025 թվականին Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի երամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարը զեկուցագրով հայտնել է, որ վերը նշված հարցումներին ի պատասխան ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի կողմից 29.10.2025 թվականին ներկայացվել է պատասխան-պարզաբանում, որը ամբողջական չէ, քանի որ պահանջվող գույքերի ներկայացված ցանկը թերի է, ցանկում ներառված չեն վարելահողերի վերաբերյալ տեղեկատվությունները, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից համայնքապետարանի հարցմանն ի պատասխան որևէ տեղեկատվություն չի տրամադրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից 31.10.2025թ. կայացվել է «Թիվ 103/25 վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» թիվ 1186 Ա որոշումը, որի համաձայն 04.09.2025 թվականին հարուցված թիվ 103/25 վարչական վարույթը կասեցվել է մինչև ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից պահանջվող ամբողջական տեղեկատվություն ստանալը, բայց ոչ ուշ, քան վերոնշյալ որոշումն ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի կողմից 29.10.2025 թվականին ներկայացված պատասխան-պարզաբանումն ամբողջական չէ, քանի որ գույքերի ներկայացված ցանկը թերի է՝ ցանկում ներառված չեն եղել

վարելահողերի վերաբերյալ տեղեկատվությունները, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից համայնքապետարանի հարցմանն ի պատասխան մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը որևէ տեղեկատվություն չի տրամադրվել, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համայնքի կողմից ձեռնարկված միջոցներով հնարավոր չի եղել պարզել արդյո՞ք թիվ 103/25 վարչական վարույթում ներառված հողամասերը ընդգրկված են ՀՀ կառավարության 20 հուլիսի 2017 թվականի N 872-Ն որոշմամբ սահմանված ցանկի 6-րդ կետում և այդ հողամասերը արդյո՞ք հանդիսանում են բացառապես գիտական և ուսումնական, ինչպես նաև գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով օգտագործվող հողեր և Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասի կանոնակարգումներով արդյո՞ք «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը վերոնշյալ հողամասերի մասով կարող է 50 տոկոսի չափով անշարժ գույքի հարկից ազատվել:

Այսպես, հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի կողմից 31.10.2025թ. կայացված «Թիվ 103/25 վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» թիվ 1186 Ա որոշմամբ սահմանված ժամկետը ավարտվում է, գտնում եմ, որ անհրաժեշտ է վերսկսել թիվ 103/25 վարչական գործի վարույթը:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համաձայն անշարժ գույքի հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից և ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքների՝ Վաղարշապատ համայնքի տարածքում գտնվող անշարժ գույքերը հանդիսանում են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի սեփականությունը և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով վերջինս չի կատարել անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունները, որի հետևանքով առաջացել է՝

1) Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Իսի-Լե-Մուլինոյի փող., թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի /հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-002-0602-0008 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-002-0602-0008-002/ հարկի գծով **111 624 /հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսանչորս/ ՀՀ դրամ** հարկային պարտավորություն, որից 91 612 /իննսունմեկ հազար վեց հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 20 012 /քսան հազար տասներկու/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

2) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /2.6866 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0186-0001/ հարկի գծով **279 120 /երկու հարյուր յոթանասունինը հազար հարյուր քսան/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 220 880 /երկու հարյուր քսան հազար ութ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 58 240 /հիսունութ հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

3) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /22.122 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0184-0001/ հարկի գծով **3 381 431 /երեք միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր երեսունմեկ/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 2 675 877 /երկու միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 705 554 /յոթ հարյուր հինգ հազար հինգ հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

4) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /16.5984 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0182-0001/ հարկի գծով **1 724 456 /մեկ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար չորս հարյուր հիսունվեց/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 1 364 639 /մեկ միլիոն երեք հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 359 817 /երեք հարյուր հիսունինը հազար ութ հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

5) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /8.5165 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0186-0002/ հարկի գծով **884 803 /ութ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր երեք/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 700 184 /յոթ հարյուր հազար հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 184 619 /հարյուր ութսունչորս հազար վեց հարյուր տասնինը/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

6) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /4.0399 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0187-00021/ հարկի գծով **419 718 /չորս հարյուր տասնինը հազար յոթ հարյուր տասնութ/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 332 142 /երեք հարյուր երեսուներկու հազար հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 87 576 /ութսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասունվեց/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

7) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /8.712 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0183-0005/ հարկի գծով **1 221 684 /մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր ութսունչորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 966 772 /ինը հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ 2021թ.-ի, 2022թ.-ի, 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 254 912 /երկու հարյուր հիսունչորս հազար ինը հարյուր տասներկու/ ՀՀ դրամ 2021-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

8) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /3.8195 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0012 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0012-004/ հարկի գծով **2 426 202 /երկու միլիոն չորս հարյուր քսանվեց հազար երկու հարյուր երկու/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 2 000 409 /երկու միլիոն չորս հարյուր ինը/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար

ապառքի գումար և 425 793 /չորս հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր իններեք/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

9) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /1.763 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0100-0021 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0100-0021-001/ հարկի գծով **460 004 /չորս հարյուր վաթսուն հազար չորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 379 342 /երեք հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 80 662 /ութսուն հազար վեց հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

10) Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /0.29 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0008 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0066-0008-003/ հարկի գծով **76 166 /յոթանասունվեց հազար հարյուր վաթսունվեց/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 62 809 /վաթսուներկու հազար ութ հարյուր ինը/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 13 357 /տասներեք հազար երեք հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

11)Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի /0.399 հա մակերեսով, հողամասի կադաստրային ծածկագիր՝ 04-081-0048-0010 և շինության կադաստրային ծածկագիր՝ 04-081-0048-0010-001/ հարկի գծով **78 154 /յոթանասունութ հազար հարյուր հիսունչորս/** ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 64 457 /վաթսունչորս հազար չորս հարյուր հիսունյոթ/ ՀՀ դրամ 2023թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների, 2024թ.-ի 1-ին և 2-րդ կիսամյակների և 2025թ.-ի 1-ին կիսամյակի համար ապառքի գումար և 13 697 /տասներեք հազար վեց հարյուր իններսունյոթ/ ՀՀ դրամ 2023-2025թթ. ապառքը ժամանակին չվճարելու ընթացքում գոյացած տույժերի գումար:

**Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստեր.**

1) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի անշարժ գույքերի վերաբերյալ ՀՀ-ում գործածվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի հարկի հաշվառման համակարգից /VXSOFT ծրագիր/ ստացված տեղեկանքներ:

2) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի անշարժ գույքերի հարկային պարտավորությունների մասով հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 04.09.2025 թվականի թիվ 3603 ծանուցագիրը և այն ստանալու մասին փոստային առաքանիներ:

3) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամի ներկայացուցիչ Մանվել Վարդանյանի 12.09.2025 թվականի գրությունը:

4) Վաղարշապատ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ-ի 16.09.2025 թվականի թիվ 3772 գրությունը՝ ի պատասխան հիմնադրամի 12.09.2025 թվականի գրության և այն հիմնադրամի կողմից ստանալու մասին փոստային առաքանին:

5) Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 03.10.2025թ. «Հարուցված վարչական վարույթի երկարաձգելու մասին» թիվ 1036 Ա որոշումը և այն հիմնադրամի կողմից ստացված լինելու մասին փոստային առաքանին:

6) Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 03.10.2025 թվականի թիվ 4156 և 4157 գրությունները «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեին:

7) ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի կողմից 29.10.2025 թվականին ներկայացված պատասխան-պարզաբանումը՝ կից ցանկով:

8) Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Կ. Սմբատյանի 31.10.2025 թվականի զեկուցագիրը:

9)Վաղարշապատ համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 31.10.2025թ. «Թիվ 103/25 վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» թիվ 1186 Ա որոշումը և այն հիմնադրամի կողմից ստանալու մասին փոստային առաքանին:

10) Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Կ. Սմբատյանի 29.12.2025 թվականի զեկուցագիրը:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ Օրենսգիրք/ 6-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են՝ տեղական հարկեր, որոնց տեսակներն են՝անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...

Օրենսգրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները...

Օրենսգրքի 226-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:

Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ հարկային օրենսգրքի 3-րդ, 4-րդ, 224-րդ-227-րդ, 236-րդ, 397-րդ, 400-րդ և 401-րդ հոդվածներով և 447-րդ հոդվածի 1.1-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերսկսել 2025 թվականի սեպտեմբերի 4-ին հարուցված թիվ 103/25 վարչական գործի վարույթը:

2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամից հօգուտ Վաղարշապատ համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **11 063 362 /տասնմեկ հազար վաթսուներեք հազար երեք հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ** չվճարված հարկային պարտավորությունների գումար:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
30 դեկտեմբերի 2025 թվականին
Ք. Էջմիածին

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1317-Լ

«30» դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 12-րդ կետը, Վաղարշապատ համայնքի ավագանու 06.10.2025թ. թիվ 116-Լ որոշումը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Վաղարշապատ համայնքի ղեկավարին կից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հարցերով խորհրդակցական մարմնի /այսուհետ՝ ԽՄ/ կազմը, համաձայն հավելվածի:

2.Վաղարշապատ համայնքի ղեկավարին կից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հարցերով խորհրդակցական մարմնի քարտուղար նշանակել Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ՝ Լիլիթ Ֆահրադյանին:

3.Սահմանել, որ ԽՄ-ի նախագահը և քարտուղարը ԽՄ-ի անդամ չեն համարվում:

4.Վաղարշապատ համայնքի ղեկավարին կից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների հարցերով խորհրդակցական մարմնի քարտուղարին և անդամներին իրենց գործունեությունը իրականացնել Վաղարշապատ համայնքի ավագանու 06.10.2025թ. թիվ 116-Լ որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ АРМАВИРСКИЙ МАРЗ МУНИЦИПАЛИТЕТ ВАГАРШАПАТА
REPUBLIC OF ARMENIA ARMAVIR MARZ MUNICIPALITY OF VAGARSHAPAT
044631138

Ստորագրված է
30 դեկտեմբերի 2025 թվականին

Հավելված
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
30.[illegible].2025թ. թիվ 134-Ա որոշման

# ԿԱԶՄ

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ

**ԽՄ-ի նախագահ**

Արգիշտի Մեխակյան /համայնքի ղեկավար/:

**ԽՄ-ի անդամներ**

Բարսեղ Նիկողոսյան /համայնքի ղեկավար խորհրդական/,

Լիլիթ Ենգիբարյան /Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ/,

Էլլադա Հայրապետյան /Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ/,

Հարություն Խաչիկյան /Վաղարշապատ համայնքի ավագանու անդամ/,

Անուշ Գալստյան/աշխատակազմի եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետի տեղակալ ժ/պ/,

Ռուզաննա Սայիյան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Սուսաննա Շաֆարյանց /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Հասմիկ Մովսիսյան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Արմինե Ղազարյան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Սուրեն Հայրիյան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Լիլիթ Զոբանյան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/,

Դավիթ Լալայան /Վաղարշապատ համայնքի բնակիչ/:

**ԽՄ-ի քարտուղար**

Լիլիթ Ֆահրադյան / աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետ /:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1318Ա

«30» դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ՊԱՎԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 1618Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի «Անչափահաս Դավիթ Պավելի Հակոբյանին առանց ծնողական խնամքի մնացած երեխա ճանաչելու մասին» թիվ 1307Ա որոշումը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Հակոբյան փողոցի թիվ 1 փակուղի թիվ 5 տուն հասցեի բնակիչ Գայանե Վանյայի Վարդանյանի 17.12.2025 թվականի դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.12.2025 թվականի թիվ 25 նիստի արձանագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 17-ի «Անչափահաս Դավիթ Պավելի Հակոբյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» թիվ 1618Ա որոշումը:
2. Անչափահաս Դավիթ Պավելի Հակոբյանի /ծնված՝ 22.09.2013թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 334670/ նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով իր մորաքրոջը՝ Գայանե Վանյայի Վարդանյանին /ծնված՝ 20.03.1966թ., անձնագիր՝ AL 0682934/:
3. Հսկողություն սահմանել անչափահաս Դավիթ Պավելի Հակոբյանի խնամակալ Գայանե Վանյայի Վարդանյանի գործունեության նկատմամբ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Գայանե Վանյայի Վարդանյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԹԵԹԵՎԱԿՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1319Ա

«30» դեկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

### ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՐԵՎԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԱՆԻ, ԳԵՂԱՄ ԵՎ ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 26-ի «Անչափահասներ՝ Արևիկ, Անի, Գեղամ և Գոռ Գրիգորի Գաբրիելյաններին առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ ճանաչելու մասին» թիվ 1310Ա որոշումը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 24/63 տան հասցեի բնակիչ Արևիկ Իսկանդարի Գաբրիելյանի 05.12.2025 թվականի դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.12.2025 թվականի թիվ 25 նիստի արձանագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անչափահաս Արևիկ Գրիգորի Գաբրիելյանի /ծնված՝ 26.02.2010թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 020958, ՀԾՀ՝ 7622100390/ նկատմամբ սահմանել հոգաբարձություն, Անի Գրիգորի Գաբրիելյանի /ծնված՝ 02.01.2012թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 144838, ՀԾՀ՝ 5221120334/, Գեղամ Գրիգորի Գաբրիելյանի /ծնված՝ 05.04.2014թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 276376, ՀԾՀ՝ 1524140147/ և Գոռ Գրիգորի Գաբրիելյանի /ծնված՝ 14.03.2017թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 534552, ՀԾՀ՝ 2423170408/ սահմանել խնամակալություն՝ հոգաբարձու և խնամակալ նշանակելով իրենց տատիկին՝ Արևիկ Իսկանդարի Գաբրիելյանին /ծնված՝ 10.04.1963թ., անձնագիր՝ AX 0594221/:
2. Հսկողություն սահմանել անչափահասների հոգաբարձու և խնամակալ Արևիկ Իսկանդարի Գաբրիելյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Արևիկ Իսկանդարի Գաբրիելյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ